

-----Original Message-----

From: Press [mailto:press@minagro.am]

Sent: 13 апреля 2018 г. 9:41

To: Agro

Subject: FW: Հայ աստան - Ռուսաստան ԱԱԱ

-----Original Message-----


From: russia@armbusiness.org [mailto:russia@armbusiness.org]

Sent: Thursday, April 12, 2018 10:47 PM

To: press@minagro.am

Subject: Հայ աստան - Ռուսաստան ԱԱԱ

Խնդրում եմ ստանալ ու դեպքում հաստատել



**ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից  
հասարակական խորհրդի նախագահ  
պարոն Իգնատի Առաքելյանին  
«Հայաստան-Ռուսաստան» առևտրաարդյունաբերական  
ասոցիացիա» ԻԱՄ (գր. համար՝ 81.151.813453)  
նախագահ Սերյոժա Բարսեղյանից  
ք. Երևան, Պ. Սևակ 8/1, բն. 36,  
հեռ. 00374-26-66-66-66, 00374-77-44-55-99  
Էլ. փոստ: russia@armbusiness.org**


### **ԴԻՄՈՒՄ**

Հարգելի պարոն Առաքելյան,

Խնդրում եմ «Հայաստան-Ռուսաստան» առևտրաարդյունաբերական ասոցիացիան ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:  
Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Ամփոփ տեղեկանք վերջին 2 տարում ծավալած գործունեության մասին (1 էջ),
2. Հետաքրքրվածության նամակ (1 էջ),
3. Լիազորագիր կազմակերպության լիազորված անձի անունով,
4. Լիազորված անձի անձնագրի պատճենը,
5. Ասոցիացիայի պետական գրանցման վկայականի պատճենը:

Դիմող՝



Ս. Բարսեղյան

<12> 04 2018 թ.



«ՀԱՅԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ»  
ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ  
ТОРГОВО-ПРОМЫШЛЕННАЯ АССОЦИАЦИЯ «АРМЕНИЯ-РОССИЯ»

No 085

«12» 04 2018թ.

Լ Ի Ա Ջ Ո Ր Ա Գ Ի Ր

«Հայաստանի և Ռուսաստանի տրավել և տրանսպորտային լիսանզիոսի և զբոսայգիների ֆարսեղյանին» հանդես գալու հիմարդյուն դատն տեսուրյան նախարարակազմի ցորհրդուն :



*U. Fuzayif*

Ս. Բարսեղյան



**«ՀԱՅԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ»**  
**ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ**  
**ТОРГОВО-ПРОМЫШЛЕННАЯ АССОЦИАЦИЯ «АРМЕНИЯ-РОССИЯ»**

---

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Ասոցիացիայի վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ**

1. Մոսկվայում գրասենյակի բացում:
2. Գործարար, բարերար Լևոն Հայրապետյանին շնորհվել է մինչև 2017թ. Ռուսաստանում լավագույն հայ գործարար-բարերար, մրցանակը հանձնվել է ՌԴ Մարդավիայի մեկուսարանում:
3. Անդամագրվել են Հայաստանում գործող Ռուսական կապիտալով ընկերությունները, որոնցից խոշորագույնը **Հայաստանի Էլեկտրական Ցանցեր** ընկերությունն է:
4. Անդամագրվել են Ռուսաստանում գործող հայ գործարարները:
5. Անդամագրվել են երկու երկրների միջև ապրանքաշրջանառություն ապահովող ընկերությունները:
6. Համագործակցություն ենք սկսել «Միասնական Ռուսաստան» համառուսաստանյան կուսակցության հետ, ունենք պայմանավորվածություն ստորագրելու համագործակցության հուշագիր, որի կետերը մշակման փուլում են, հուշագիրը նպաստավոր կլինի Հայաստանի և ՌԴ-ում հայ գործարարների համար:
7. Համագործակցել Եվրասիական Միության հետ, արդեն իսկ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի գործարարների և ագրոարդյունաբերական համալիրի հարցերով կոմիտեներում, որպես անդամ ընդգրկված են Ասոցիացիայի ներկայացուցիչները: Ասոցիացիան կհանդիսանա նաև Եվրասիական Միության գործարար խորհրդի անդամ:
8. Համագործակցության հուշագիր է ստորագրվել «Օպոռա Ռոսսիա» համառուսաստանյան հասարակական կազակերպության հետ:
9. «Օպոռա Ռոսսիա» համառուսաստանյան հասարակական կազակերպության Աբխազիայի ներկայացուցրի հետ աշխատանքներ են տարվում Հայաստան – Ռուսաստան երկաթուղու Աբխազական հատվածի փակ լինելու հարցի շուրջ:
10. Իրականացնում ենք Տավուշի մարզի սահմանապահ գյուղերի զարգացման ծրագրեր. Պլանավորում ենք բոլոր սահմանամերձ գյուղերում ստեղծել արտադրամասեր, արդեն իսկ մեկնարկել ենք Ոսկեվան գյուղի զարեջրի և Վազաշեն գյուղի հանքային ջրի գործարանների աշխատանքները:
11. Իրականացնում ենք նաև բարեգործական ծրագրեր, օրինակ ՄԱԿ-ի գրասենյակի հետ համատեղ վերանորոգել ենք Ոսկեվան գյուղի մշակույթի տունը, սահմանամերձ գյուղի բնակիչներին տրամադրում ենք տարատեսակ բնույթի օժանդակություն: Ոսկեպար գյուղում իրականացնում ենք վերաբնակեցման ծրագիր:
12. Տավուշի մարզում իրականացվել է ուսումնասիրություն և կազմվել է գյուղատնտեսական հողերի կառավարման ծրագիր:



«ՀԱՅԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ»  
ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ  
ТОРГОВО-ПРОМЫШЛЕННАЯ АССОЦИАЦИЯ «АРМЕНИЯ-РОССИЯ»

---

**Հետաքրքրվածության նամակ**

«Հայաստան-Ռուսաստան» առևտրաարդյունաբերական ասոցիացիան, տեղեկանալով ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի նոր անդամների համալրման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության հայտարարության մասին, մեծ ցանկություն է հայտնում անդամակցել Խորհրդին:

Ասոցիացիան գտնում է, որ այդ համագործակցությունը կարող է մեծապես նպաստել ասոցիացիայի և նրա անդամ ընկերությունների կողմից Տավուշի մարզում իրականացվող գյուղատնտեսական գործունեությանը: Ինչպես նաև, հանդիսանալով երկկողմ կառույց և նախարարության նման խորհրդի անդամ, ասոցիացիան կարող է օժանդակել ՀՀ և ՌԴ գյուղատնտեսության ոլորտի միությունների և ընկերությունների միջև համագործակցությանը, փորձի փոխանակմանը, համատեղ ցուցահանդեսների և համաժողովների կազմակերպմանը: